# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N3273 - Ա** **23 ապրիլի 2009թ.**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի Հ. 3618-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ, Վ. ՎԱՀՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 22 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՉԻԿ ԳԵՂԱՄԻ ԶԻՆԱԳՈՐԾՅԱՆԻ, ՀՌԻՓՍԻՄԵ ԳԵՂԱՄԻ ԶԻՆԱԳՈՐԾՅԱՆԻ, ԱՆՆԱ ԽԱՉԻԿԻ ԶԻՆԱԳՈՐԾՅԱՆԻ, ԱԶՆԻՎ ԽԱՉԻԿԻ ԶԻՆԱԳՈՐԾՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Խաչիկ Գեղամի Զինագործյանի (ծնված 16.09.1951թ.), Հռիփսիմե Գեղամի Զինագործյանի (ծնված 25.05.1950թ.), Աննա Խաչիկի Զինագործյանի (ծնված 13.03.1988թ.), Ազնիվ Խաչիկի Զինագործյանի (ծնված 20.08.1978թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Վ. Վահյան փողոցի հ.22 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 200.86քմ, որից 135.48քմ մակերեսով հողամասը Խաչիկ Գեղամի Զինագործյանին, Հռիփսիմե Գեղամի Զինագործյանին, Աննա Խաչիկի Զինագործյանին, Ազնիվ Խաչիկի Զինագործյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասն է: Բնակելի տան զբաղեցրած հողամասին կից օգտագործվող 65.38քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1949 թվականը, 23.10.2007թ. ժառանգության իրավունքի վկայագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման 09.09.2008թ. հ.1390 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 31.03.2009թ. հ.20-Ել-2545 եզրակացությունը, համաձայն որի Վ. Վահյան փողոցի հ.22 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Չեղյալ ճանաչել Երևանի քաղաքապետի 2008 թվականի օգոստոսի 1-ի հ.3618-Ա որոշումը և դրա հիման վրա տրված գլխավոր հատակագիծը:

2. Վերականգնել Վ. Վահյան փողոցի հ.22 հասցեում Խաչիկ Գեղամի Զինագործյանին, Հռիփսիմե Գեղամի Զինագործյանին, Աննա Խաչիկի Զինագործյանին, Ազնիվ Խաչիկի Զինագործյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 135.48քմ մակերեսով հողամասի չափով, բնակելի տանը կից հողամասի հողօգտագործման իրավունքը 65.38քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 200.86քմ մակերեսով հողամասի և 65.38քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

3. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից։

4. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

5. Վ. Վահյան փողոցի հ.10 և հ.22 հասցեի բնակելի տներին տրամադրել հասցե՝ <<Վ. Վահյան փողոցի հ.22 տուն>>։

6. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Խաչիկ Գեղամի Զինագործյանի, Հռիփսիմե Գեղամի Զինագործյանի, Աննա Խաչիկի Զինագործյանի, Ազնիվ Խաչիկի Զինագործյանի սեփականության իրավունքը սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

7. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ–Զեյթուն թաղապետարան։

8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

9. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ